ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1821-21/2 «14» սեպտեմբերի 2023 թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ «ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԵՐՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ («ԱՆԳԼԵՐԵՆ») ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հանրակրթական ուսումնական հաստատությունների 6-րդ դասարանի «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի երրորդ օտար լեզվի առարկայական ծրագիրը («Անգլերեն»)՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

9/14/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
2023 թվականի սեպտեմբերի 14-ի
N 1821-Ա/2 հրամանի

ԵՐՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՆԳԼԵՐԵՆ

6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

(շաբաթական 1,5-2 ժամ)

Նախաբան

Երրորդ օտար լեզվի չափորոշչի և ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել Հանրակրթության պետական նոր չափորոշչի (ՀՊՉ) և «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի չափորոշիչն ու ծրագրերը:

Երրորդ օտար լեզվի ուսուցման նպատակներն են՝ Լեզուների իմացության եվրոպական շրջանակի (ԼԻԵՇ) A1 և A2 մակադակներին համապատասխան հաղորդակցվելու հմտությունների զարգացումը, այլ մշակույթների ճանաչումը, սովորողների մտահորիզոնի ընդլայնումը, նրանց տրամաբանական, ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացումը:

Ուսուցման և ուսումնառության բովանդակության հիմքում ընկած են մի քանի կարևոր դրույթներ, մասնավորապես՝

1. օտար լեզուն առաջնայնորեն հաղորդակցության միջոց է,
2. օտար լեզուն ուսումնառության և ճանաչողական կարողությունների զարգացման միջոց է,
3. օտար լեզվով հաղորդակցումը աշխարհճանաչման, ինքնաճանաչման և այլ մշակույթների ճանաչման հիմնական միջոցն է:

Երրորդ օտար լեզվի ուսուցումը սկսվում է 5-րդ դասարանից նախաայբբենական շրջանով: Նախաայբբենական շրջանը կառուցվում է բանավոր խոսքի հիման վրա: Բանավոր դասընթացը կարող է ուղեկցվել այբուբենի տառերի պատկերների ծանոթացմամբ:

Նախաայբբենական շրջանը կարող է ներառել բանավոր խոսքի ձևավորմանը նպաստող կարճ երկխոսություններ, բանաստեղծություններ, երգեր, խաղեր, պաստառներ, համապատասխան տեսալսողական միջոցներ և այլն:

Այս փուլի հիմնական նպատակը հետաքրքրությունների ձևավորելն է երրորդ օտար լեզվի ոսումնառության նկատմամբ: Այդ տարիքի սովորողներն արդեն ունեն որոշակի հաղորդակցական հմտություններ, որոնք թույլ են տալիս շփվել միմյանց հետ նոր օտար լեզվով: Բանավոր դասընթացին հաջորդում է հիմնական մասը: Ելնելով թեմատիկայի և այն ուսումնասիրելու համար անհրաժեշտ լեզվանյութի փոխկապվածությունից և փոխպայմանավորումից՝ թեմատիկ շրջանակն ընտրվել է հաշվի առնելով Լեզուների իմացության եվրոպական շրջանակի (ԼԻԵՇ) A1 և A2 մակարդակների համար նախատեսված թեմատիկան և Հանրակրթության պետական նոր չափորոշչով հիմնական դպրոցի կրթական աստիճանի համար սահմանված վերջնարդյունքները:

Սույն ծրագիրը նախատեսված է հանրակրթական դպրոցների կողմից ընտրված երրորդ օտար լեզվի (գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն) ուսուցման համար: Այլ լեզու ընտրելու դեպքում հիմք են հանդիսանում ծրագրում նշված թեմատիկան, նպատակներն ու վերջարդյունքները, որոնք կարող են տեղայնացվել՝ կիրառելով համապատասխան քերականություն և բառապաշար:

Վերջանարդյունքներին հասնելու համար ուսումնական նյութերի ընտրությունը թողնվում է ուսուցչին. դրանք կարող են լինել ինչպես գործող դասագրքերը, այնպես էլ A1 և A2 մակարդակներին համապատասխան այլ ձեռնարկները և առցանց տարբեր նյութեր:

Ծրագրում ներկայացված միջառարկայական կապեր բաժնում նշված տարբեր առարկաներից ուսուցիչը ընտրում է այն առարկան, որն առավելագույնս խաչվում է օրվա դասի թեմայի հետ:

Երրորդ օտար լեզվի ուսուցման նպատակները

Հիմնական դպրոցում երրորդ օտար լեզվի ուսուցման նպատակն է՝

1. ԼԻԵՇ-ի **A1, A2** մակարդակներին համապատասխան հաղորդակցական կարողությունների զարգացումը,

2. կրթական տվյալ մակարդակին, թեմային և հաղորդակցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիքի (բառապաշար, քերականություն, ուղղագրություն, արտասանություն) զարգացումը,

3. սովորողների մոտ այլ լեզուների և մշակույթների հանդեպ հետաքրքրության սերմանումը:

Երրորդ օտար լեզվի ուսուցման վերջնարդյունքները.

Հաղորդակցություն

1. Լսել և հասկանալ իրեն ծանոթ առօրյա թեմաներով հնչող պարզ, հստակ և դանդաղ խոսքը:
2. Կարդալ և հասկանալ իրեն ծանոթ առօրյա թեմաներով պարզ տեքստի հաղորդած տեղեկությունները և հիմնական բովանդակությունը:
3. Համառոտ նկարագրել իրեն, իր շրջապատը, իր առօրյան:
4. Շարադրել պարզ համառոտ տեքստ իր, իր շրջապատի, առօրյայի մասին:
5. Սկսել երկխոսություն իրեն ծանոթ թեմայով՝ արձագանքելով իրեն ուղղված հարցերին: Արտահայտել համաձայնություն կամ անհամաձայնություն՝ տալով պարզ պատասխաններ կամ խնդրելով հստակեցումներ:
6. Կիրառել տվյալ մակարդակին, թեմային և հաղորդակցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիք (քերականություն, բառապաշար):

1. Մշակութային վերջնարդյունքներ

Արժեքներ

1. Ճանաչել համաշխարհային մշակութային բազմազանությունը, ժառանգությունը և արժեքները:

2. Գիտակցել բազմալեզու կրթության դերը՝ որպես գլոբալ աշխատաշուկայում հաջողության գրավական:

3. Կարևորել համակեցության նախապայման հանդիսացող արժեքները (ընկերասիրություն, հարգանք, մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և այլն):

Վերաբերմունք

1. Ցուցաբերել հարգալից, հոգատար և պատասխանատու վերաբերմունք այլ ազգությունների, նրանց մշակույթների նկատմամբ:
2. Ցուցաբերել հետաքրքրություն այլ երկրների և մշակույթների ճանաչման նկատմամբ:

Նորմեր, կանոններ

1. Իմանալ լեզվակիր երկրի մշակութային առանձնահատկությունները:
2. Ճանաչել մշակույթով/ժամանակով պայմանավորված կենցաղի մի շարք նորմեր (հագուստ, սնունդ և այլն):
3. Ճանաչել ուսումնասիրվող լեզվով հաղորդակցության նորմերը և պահպանել դրանք այդ լեզվով հաղորդակցվելիս:

Հետաքրքրություններ/Նախասիրություններ

1. Դրսևորել հետաքրքրություն ուսումասիրվող լեզվի երկրների մշակութային արժեքների հանդեպ:
2. Ճանաչել ուսումնասիրվող լեզվի երկրի հասակակցի հետաքրքրություններն ու նախասիրությունները:

2. Քննական և ստեղծարար միտք

Միտք

1. Ձևակերպել կապակցված միտք արտահայտող պարզ խոսք:
2. Բերել պարզ հիմնավորումներ:
3. Ընտրել, ստեղծել և կիրառել մտքերն արդյունավետ կերպով ներկայացնող տեսողական միջոցներ:

Տրամաբանական կապեր

1. Դասավորել մտքերը միմյանց հետ փոխկապակցվածությամբ (ընդհանուր/մասնավոր, պատճառ/հետևանք)՝ ճիշտ լեզվական միջոցների կիրառմամբ:

Վերլուծություն

1. Դասակարգել թեմայի շուրջ ստացված տեղեկությունները:
2. Նշել ազգային և համաշխարհային մշակույթների նմանություններն ու տարբերությունները:

Առաջընթաց

1. Արձագանքել ուսուցչի պարզ հրահանգներին:
2. Բերել պարզ հիմնավորումներ, մտքեր և մեկնաբանել դրանք:

1. Նախասիրություն/հոբբի
2. Բնակավայր/համայնք
3. Ուղևորություն
4. Երկիրը, որի լեզուն ես սովորում եմ
5. Տոներ

ԹԵՄԱ 1	
Նախասիրություն/հոբբի	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** նախասիրություն/հոբբի թեմային առնչվող բառապաշար: 2. **Ներմուծել** թեմային համապատասխան պարզ քերականություն: 3. **Զարգացնել** նախասիրությունների, նախընտրելի զբաղմունքների մասին կարճ կապակցված խոսք կազմելու հմտություններ:	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 1. թեմային առնչվող	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. լսել և հասկանալ նախասիրությունների և

բառապաշարը, 2. թեմային առնչվող քերականական պարզ նյութ, 3. ազատ ժամանակը ճիշտ տնօրինելու ձևերը:	հետաքրքրությունների մասին պարզ խոսքը (տեսանյութ, ձայնագրություն և այլն), 2. կարդալ և հասկանալ հետաքրքրությունների/հոբբիների մասին պարզ տեքստը, 3. հանդես գալ իր նախասիրությունների և հետաքրքրությունների մասին նախապես պատրաստված կարճ խոսքով, 4. պարզ արտահայտություններով վարել շատ կարճ երկխոսություն իր և իր ընկերների նախասիրությունների մասին, 5. պարզ նախադասություններով գրավոր նկարագրել սեփական նախասիրությունները և առօրյան:
Բովանդակություն	
1. Ինչպե՞ս եմ տնօրինում իմ ազատ ժամանակը 2. Իմ հետաքրքրությունները/հոբբին	
Առաջարկվող գործունեության ձևեր 1. Դերախաղ՝ «Իմ հետաքրքրությունները/հոբբին»: 2. Նամակ՝ «Ինչ եմ անում ազատ ժամանակ»: 3. Պաստառ «Ժամանցի ձևեր»: 4. Այց թանգարան, թատրոն, կինո և այլն:	
Միջառարկայական կապեր	
Մայրենի – Շարադրել գրավոր տեքստ ազատ ժամանակի/նախասիրությունների մասին: **Կերպարվեստ –** Պատկերել իր ժամանցի ձևերը: **Տեխնոլոգիա –** Պատրաստել պաստառ իր հետաքրքրությունների վերաբերյալ:	

ԹԵՄԱ 2
Բնակավայր/համայնք

Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** բնակավայրի, համայնքի և հարևանության կարևորության գաղափարը: 2. **Ծանոթացնել** բնակավայր/համայնք թեմային բնորոշ բառերին, արտահայտություններին: 3. **Ներմուծել** բնակավայր/համայնք թեմային համապատասխան պարզ քերականությունը: **4. Ձևավորել հոգատար վերաբերմունք սեփական բնակավայրի, համայնքի հանդեպ:**	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 1. թեմային առնչվող բառապաշարը, 2. թեմային առնչվող քերականական պարզ նյութը, 3. քաղաքավարի շփման կանոնները, 4. ժամանցի վայրերում կիրառվող վարքականոնի սկզբունքները:	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. լսել և հասկանալ բնակավայրի, համայնքի, ժամանցի վայրերի մասին պարզ խոսքը (տեսանյութ, ձայնագրություն և այլն), 2. կարդալ և հասկանալ բնակավայրի, համայնքի, ժամանցի վայրերի մասին պարզ տեքստեր, 3. պատասխանել բնակավայրի և համայնքի շուրջ իրեն ուղղված պարզ հարցերին, 4. պարզ նախադասություններով վարել շատ կարճ երկխոսություն իր բնակավայրի, ժամանցի վայրերի և համայնքի մասին, 5. կազմել շատ կարճ, պարզ գրավոր տեղեկություն՝ նկարագրելով իր համայնքը, բնակավայրը:
Բովանդակություն	
1. Իմ բնակավայրը (նկարագրություն, հետաքրքիր փաստեր) 2. Ժամանցի վայրեր	
Առաջարկվող գործունեության ձևեր 1. Նամակ՝ «Իմ բնակավայրը»: 2. Քարտեզագրում՝ ժամանցի վայրերը: 3. Պաստառ՝ «Իմ բնակավայրը»:	

Միջառարկայական կապեր
Մայրենի – Գրել նամակ՝ ներկայացնելով իր բնակավայրը/ համայնքը: **Կերպարվեստ –** Պատկերել իր բնակավայրը / ժամանցի վայրերը: **Երաժշտություն –** Երգել իր բնակավայրի մասին երգ: **Թվային Գրագիտություն –** Պատրաստել թռուցիկ ժամանցի վայրերում վարքականոնների/քաղաքավարության կանոնների վերբերյա:

ԹԵՄԱ 3	
Ուղևորություն	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** ուղևորության, երթևեկության միջոցների, երթևեկության կանոնների կարևորությունը: 2. **Ծանոթացնել** ուղևորություններին, առաջիկա պլաններին, երթևեկության կանոններին վերաբերող պարզ ցուցումներին: 3. **Զարգացնել** ուղևորությունների, տեսարժան վայրերի, տեսարժան վայրերի վերաբերյալ համատեքստում խոսքը կիրառելու հմտությունը: 4. **Ձևավորել** հոգատար վերաբերմունք ուղևորության ընթացքում շրջակա միջավայրի հանդեպ:	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝ 1. Թեմային առնչվող բառապաշարը, 2. համապատասխան քերականական նյութը, 3. երթևեկության պարզ կանոնները, 4. սեփական երկրի և ուսումնասիրվող լեզվի	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա*** 1. լսել և հասկանալ երթևեկության և ուղևորության վերաբերյալ պարզ տեքստերի հիմնական բովանդակությունը, 2. կարդալ և հասկանալ երթևեկության և ուղևորության վերաբերյալ պարզ տեքստերի հիմնական բովանդակությունը, 3. հանդես գալ ուղևորության, առաջիկա պլանների և բնակավայրի մասին նախապես պատրաստված

երկրի որոշ տեսարժան վայրերը:	կարճ և պարզ խոսքով, 4. կազմել կարճ, պարզ գրավոր տեղեկություն՝ գործածելով համապատասխան բառապաշար:

Բովանդակություն
1. Երթևեկության միջոցներ 2. Կողմնորոշում տեղանքում 3. Տեսարժան վայրերի այցելություն
Առաջարկվող գործունեության ձևեր
1. Պաստառ՝ «Տեսարժան վայրեր» 2. Տեսանյութի դիտում՝ քննարկում Դերախաղ՝ «Ճամփորդելիս», «Երթևեկության հրահանգներ»
Միջառարկայական կապեր
Մայրենի- Ներկայացնել իր նախընտրած տեսարժան վայրը: **Տեխնոլոգիա-**Պատրաստել պաստառ «Երթևեկության կանոններ» -ի մասին: **Թվային գրագիտություն**-Կազմակերպել հեռավար այցելություն դեպի տեսարժան վայրեր:

Թեմա 4
Երկիրը, որի լեզուն ես սովորում եմ
Հիմնական նպատակը
1. **Ներմուծել** և ընդլայնել ուսումնասիրվող լեզվի երկիրը (աշխարհագրական դիրք, սահմաններ, քաղաքներ, բնակչություն, տեսարժան վայրեր) ներկայացնող բառապաշարը: 2. **Ներմուծել** և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը: 3. **Զարգացնել** ուսումնասիրվող լեզվի երկիրը բանավոր և գրավոր խոսքում ներկայացնելու հմտություններ: 4. **Ծանոթացնել** լեզվակիր երկրի հասակակցի առօրյային ու հետաքրքրություններին: **5. Ձևավորել հարգալից վերաբերմունք այլ մշակույթների հանդեպ:**

Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</u> 1. թեմային առնչվող բառապաշարը, 2. համապատասխան քերականական նյութը, 3. պատմա-աշխարհագրական տեղեկություններ լեզվակիր երկրի մասին, 4. լեզվակիր երկրի հասակակցի առօրյան ու հետարքրությունները:	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. լսել և հասկանալ ուսումնասիրվող լեզվի երկրի մասին կարճ տեսանյութերի հիմնական բովանդակությունը, 2. կարդալ և հասկանալ ուսումնասիրվող լեզվի երկրին, այնտեղ ապրող հասակակցի առօրյային ու հետարքրություններին վերաբերող տեքստը**,** 3. հակիրճ ներկայացնել նախօրոք պատրաստված խոսքը ուսումնասիրվող լեզվի երկրի որևէ տեսարժան վայրի մասին, 4. գրել նամակ լեզվակիր երկրում բնակվող հասակակցին՝ ներկայացնելով իր առօրյան և հետաքրքրությունները**,** 5. Մասնակցել ուսումնասիրվող լեզվի երկրի մասին երկխոսություններին՝տալով հարցեր և պատասխանելով իրեն ուղղված հարցերին, **6. Արժևորել մշակութային և լեզվական բազմազանությունը:**
Բովանդակություն	
1. Պատմա-աշխարհագրական տեղեկություններ 2. Տեսարժան վայրեր 3. Իմ այլազգի հասակակիցը	
Առաջարկվող գործունեության ձևեր	

1. Սահիկաշար՝ «Երկիրը, որի լեզուն ես սովորում եմ», 2. Հետազոտական աշխատանք՝ «Տեսարժան վայրեր» 3. Դերախաղ
Միջառարկայական կապեր
Մայրենի- Ներկայացնել այլազգի իր հասակակցի հետ ունեցած նմանություններն ու տարբերությունները: **Աշխարհագրություն**- Քարտեզի վրա ցույց տալ ուսումնասիրվող լեզվի երկրները, դրանց սահմանակից պետությունները, դրանց մայրաքաղաքները և խոշոր տնտեսական կենտրոնները: **Կերպարվեստ**- Պատկերել ուսումնասիրվող լեզվի երկրի որևէ խորհրդանիշ, տեսարժան վայր:

Թեմա 5	
Տոներ	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** տոներ/ տարեդարձ/ազգային տոներ /միջազգային տոներ նկարագրող բառապաշարը: 2. Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը: 3. **Ծանոթացնել** ուսումնասիրվող լեզվի երկրում և Հայաստանում անցկացվող ազգային տոների նմանություններին ու տարբերություններին: **4. Ձևավորել հարգալից վերաբերմունք այլ մշակույթների (տոների) հանդեպ:**	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</u> 1. թեմային առնչվող բառապաշարը, 2. համապատասխան քերականական նյութը, 3. Հայաստանում և ուսումնասիրվող լեզվի երկրում միջազգային տոները:	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. լսել և հասկանալ տարեդարձի, ազգային տոների պարզ տեքստերի հիմնական բովանդակությունը, 2. կարդալ և հասկանալ տարեդարձի,

	ազգային տոների մասին տեքստի ընդհանուր բովանդակությունը, 3. ներկայացնել (գրավոր կամ բանավոր) իր տարեդարձը, որևէ ազգային կամ միջազգային տոն՝ գործածելով կարճ և պարզ արտահայտություններ, 4. մասնակցել տարեդարձի, տոների շուրջ տարվող երկխոսություններին, **5. արժևորել ազգային տոները որպես ազգային մշակույթի կարևոր բաղադրիչ:**

Բովանդակություն

1. Տարեդարձ
2. Ազգային տոներ (ուսումնասիրվող երկրում և Հայաստանում)
3. Միջազգային տոներ

Առաջարկվող գործունեության ձևեր

1. Դերախաղ
2. Սահիկաշար/պրեզենտացիա՝ «Իմ սիրած տոնը»
3. Տեսահոլովակի դիտում/քննարկում

Միջառարկայական կապեր

Մայրենի- Գրել շնորհավորական բացիկ ընկերոջը՝շնորհավորելով նրա տարեդարձը/ Նոր տարին/ Սբ. Ծնունդը և այլն:
Կերպարվեստ- Պատկերել ամենասիրած տոնը:
Տեխնոլոգիա- Պատրաստել ավանդական տոնական ուտեստ և տոնի հետ ասոցացվող այլ պարագաներ՝ դիմակներ, զարդանախշեր և այլն:
Պատմություն-Ուսումնասիրել և ներկայացնել ավանդական տոնական ուտեստի պատմություն:
Թվային գրագիտություն- դիտել տեսահոլովակ հայ/արտասահմանյան որևէ տոնի մասին:
Երգ- երգ երգել որևէ տոնի/տարեդարձի մասին:

Դասարան	Թեմաներ	Հնչյունաբանություն	Քերականություն
6-րդ դասարան	1. Նախասիրություն/հոբբի 2. Բնակավայր/համայնք 3. Ուղևորություն 4. Երկիրը, որի լեզուն ես սովորում եմ 5. Տոներ	Pronunciation Stressed and unstressed syllables	Quantifiers: A lot of, a little, a few Possessive adjectives and pronouns Possessive ’s Prepositions of time, including in/on/at Prepositions of movement Present simple Adverbs of frequency (always, usually sometimes, never) Adjectives: common and demonstrative (this, that, these, those) Going to Present continuous Comparative and superlative adjectives (short adjectives) Past simple: to be Past Simple: regular verbs Past Simple: irregular verbs Present Perfect

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, Երևան, 2021թ.
2. Հանրակրթական ընդհանուր ծրագրի «ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ» բնագավառի 2-12-րդ դասարանների չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2021թ.
3. Common European Framework of Reference for Languages: Learning, Teaching, Assessment, Cambridge University Press, Modern Languages Division, Council of Europe, Strasbourg, 2001. Available at https://rm.coe.int/1680459f97